ՖԻՆՔԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Հիմնական հասկացություններ

Սույն կանոնների մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները.

1.1. **Կազմակերպիչ՝** «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ:
1.2. **Խաղարկություն՝** գովազդային վիճակախաղ, որտեղ պատահականության սկզբունքով ընտրվելու է մեկ հաղթող մասնակից:
1.3. **Մրցանակ՝** այն շահումը, որը տրամադրվելու է հաղթող մասնակցին:
1.4. **Մասնակից՝** այն հաճախորդը, ով բավարարում է սույն կանոոններով սահմանված բոլոր պայմաններին:
1.5. **Կանոններ՝** «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից նշված պայմաններ:
1.6. **Ժամկետ՝** 2025թ. հոկտեմբերի 15-ից (Երևանի ժամանակով ժամը 00:00-ից) մինչև 2025թ. դեկտեմբերի 20-ն (Երևանի ժամանակով ժամը 23:59-ը) ընկած ժամանակահատված:

2. Ընդհանուր դրույթներ

2.1. Խաղարկությունը կազմակերպվում է «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից:
2.2. Խաղարկությանը մասնակցելու դեպքում մասնակիցը ընդունում է սույն խաղարկության կանոնները:

3. Խաղարկության պայմաններ

3.1. Այն հաճախորդները, ովքեր ժամկետի ընթացքում կվարկավորվեն «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ-ի կողմից և մինչև խաղարկության ամփոփման պահը՝ 2025թ. դեկտեմբերի 25-ը կհանդիսանան վարկառու, կմասնակցեն խաղարկությանը, որտեղ կխաղարկվի 500,000 ՀՀ դրամ արժողությամբ ճանապարհորդական սերտիֆիկատ:

4. Խաղարկությանը մասնակցելու պայմաններ

4.1. Խաղարկությանը մասնակցելու համար անհրաժեշտ է նշված ժամկետի ընթացքում վերցնել ցանկացած գումարի չափով վարկ և մինչ խաղարկության ամփոփումը՝ 25 դեկտեմբերի 2025թ. լինել ակտիվ վարկառու:
4.2. «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի աշխատակիցները չեն կարող մասնակցել խաղարկությանը:

5. Մրցանակներ

5.1. Խաղարկվում է 500,000 ՀՀ դրամ արժողությամբ ճանապարհորդական սերտիֆիկատ, որը հաղթող մասնակիցը կարող է օգտագործել ցանկացած ուղղությամբ:

6. Խաղարկություն

6.1. Խաղարկությունը տեղի կունենա 2025թ.-ի Դեկտեմբերի 25-ին, ժամը 15:00-ին:
6.2. Հաղթողն ընտրվելու է պատահականության սկզբունքով:
6.3. Խաղարկությունը հեռարձակվելու է ուղիղ եթերով՝ ՖԻՆՔԱ Հայաստանի պաշտոնական ֆեյսբուքյան էջում:
6.4. 2025թ. հոկտեմբերի 15-ից մինչև 2025թ. դեկտեմբերի 20-ն ընկած ժամկետի ընթացքում վարկավորված հաճախորդները խաղարկությանը մասնակցելու և նույնականացվելու են հեռախոսահամարների միջոցով:
6.5. Ուղիղ եթերում բջջային հեռախոսահամարները ամբողջությամբ չեն հրապարակվելու, միայն էկրանին տեսանելի կլինեն վերջին 4 թվերը:
6.6. Ուղիղ եթերի ժամանակ պատահականության սկզբունքով ընտրված հաղթող մասնակցին նույն պահին կատարվելու է հեռախոսազանգ: Առաջին զանգին չպատասխանելու դեպքում կատարվելու է երկրորդ հեռախոսազանգը: Երկու զանգերի դեպքում էլ հաղորդավարը սպասելու է մինչև զանգի

ավտոմատ ընդհատումը:
6.7. Այն դեպքում, երբ հաղթող մասնակիցը չի պատասխանում արդեն երկրորդ հեռախոսազանգին կամ գտնվում է ռադիոծածկույթից դուրս, նրա փոխարեն նույն պահին պատահականության սկզբունքով ընտրվում է մեկ այլ մասնակից:
6.8. Հաղթող մասնակիցը պարտավորվում է մրցանակը ստանալ 30 օրացույցային օրվա ընթացքում:

7. Լրացուցիչ դրույթներ

7.1. Մրցանակը հաղթողին տրամադրվելու է անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում, որը պետք է համընկի վարկավորված անձի տվյալների հետ:
7.2. Մրցանակը դրամական միջոցներով փոխարինելու հնարավորություն չի տրվում:
7.3. Հաղթող մասնակիցը սույն պայմաններին և կանոններին համապատասխան, տալիս է լուսանկարահանվելու իր համաձայնությունը՝ ՖԻՆՔԱ Հայաստանի սոցիալական հարթակներում հրապարակումների համար: